Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, մայիսի 26-ի N 1022-Ն, 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշումների, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն և 2024 թվականի մայիսի 16-ի N 64-Ա որոշումների, հաշվի առնելով Նվեր Ավետիսյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 29-ի N Ք-1482) և համաձայնությունը.

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2024 թվականի ապրիլի 30-ի N 02052024-07-0015 վկայական) Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի թիվ 1/1 հասցեում գտնվող ավտոտնակը՝ 19.6 քառակուսի մետր արտաքին և 17.5 քառակուսի մետր ներքին մակերեսներով, և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 19.6 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Նվեր Ռուբիկի Ավետիսյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 2 725 (երկու հազար յոթ հարյուր քսանհինգ) դրամ (տարածագնահատման 9-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.2725).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 10 513.8 (տասը հազար հինգ հարյուր տասներեք ամբողջ ութ) դրամ:

4. Նվեր Ավետիսյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին՝ 53 410 (հիսուներեք հազար չորս հարյուր տասը) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին՝ 206 071 (երկու հարյուր վեց հազար յոթանասունմեկ) դրամ՝ հողամասի գինը.
3) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին՝ 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար, 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Նվեր Ավետիսյանի կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նվեր Ավետիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2024թ. հունիսի 06
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2024 թվականի N 2681

ԳԱՐԻԿ, ԳԱԳԻԿ ԵՎ ՔՐԻՍՏԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՊԱՐՍՊԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 198-Ն որոշման, հաշվի առնելով Գարիկ Ղազարյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 24-ի N Ք-3774).

1. Ձևակերպել կառուցապատողներ Գարիկ, Գագիկ և Քրիստինե Ղազարյանների կողմից իրականացված Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 1-ին թաղամասի թիվ 2 հողամասի հասցեում գտնվող բնակելի տան և պարսպի կառուցման շահագործման թույլտվությունը (շահագործման թույլտվությունը կցվում է):
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են Աբովյանի համայնքապետարանի 900105201355 հաշվեհամարին մուծել 14 000 (տասնչորս հազար) դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվություն տրամադրելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. հունիսի 06
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ԱԲՈՎՅԱՆ
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ)

N 186 «06» հունիսի 2024թ.

Կառուցապատող Գարիկ, Գագիկ և Քրիստինե Ղազարյանների հեռ. +374 77800256 կողմից
(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Կառուցված բնակելի տուն և պարիսպ
(օբյեկտի անվանումը)

որը գտնվում է Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, 8-րդ միկրոշրջան 1-ին թաղամաս թիվ 2 հասցեում
(օբյեկտի տեղադրությունը, հասցեն)

համարվում է ավարտված և պատրաստ է շահագործման, որի՝

1.նախագծային փաստաթղթերը մշակվել են «ՍՄ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ-ի կողմից
Արտոնագիր՝ ՃԲԴ-Ա-047, ԿԲԴ-Ա-018
(նախագծային կազմակերպության անվանումն օրենքով սահմանված դեպքե րում՝ լիցենզիայի համարը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, լիցենզիայի համարը)

2.շինարարությունն սկսվել է Աբովյան համայնքի ղեկավարի կողմից
(շինարարության թույլտվություն տվող մարմնի ան վանումը)

Տրված «18» ապրիլի 2023 թ. N 149 շինարարության թույլտվության համաձայն.

3.շինարարությունն իրականացվել է սեփականատերերի կողմից
(գլխավոր կապալառուի անվանումը)

4.օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ կիսանկուղով բնակելի տուն և պարիսպ
5. հատուկ պայմանները ոչ էական շեղումներով

ՀԻՄՔԵՐ՝
1) կառուցապատողի դիմումը «24» մայիսի 2024 թ.
2) ընդունող հանձնաժողովի ակտը «24» մայիսի 2024թ.
3) կատարողական փաստաթղթերի ցանկը կամ շինության տեխնիկական վիճակի մասին համապատասխան հետազննության դրական եզրակացությունը 7 թերթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

« 06 » հունիսի 2024թ.

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2024 թվականի N 2680

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով Գուրգեն Մարտիրոսյանի լիազորած անձ Լևոն Մարտիրոսյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 29-ի N Ք-3840).

1. Գուրգեն Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2003 թվականի հուլիսի 21-ի N 1813547 վկայական) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Աբովյան, գյուղ Մայակովսկի, 13-րդ փողոց, 21:

2. Գուրգեն Մարտիրոսյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. հունիսի 06
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2024 թվականի N 2679

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, հիմք ընդունելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 24-ի N Ք-3767).

1. Հաստատել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքում գտնվող 07-002-0084-0001 կադաստրային ծածկագրից 1.9 քառակուսի մետր մակերեսով հողամասի հատակագիծը (կցվում է):
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Երիտասարդական փողոց, 14/23:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. հունիսի 06
ք. Աբովյան

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Սեփականատեր		Հաստատում եմ
Արովյան համայնք	Կոտայք Արովյան	Համայնքի ղեկավար 06.06.2024թ. Կ.Տ.
	Մարզ, համայնք, հասցե	անուն, ազգանուն, հայրանուն
	Հողահատկացման հիմքը	



Մակերես հա	0.00019
Ծածկագիր	07-002-0084-0001-hg
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի
Գործառնական նշանակություն	Բնակելի կառուցապատման

Լրացուցիչ նշումներ.

Շրջադարձային (բեկման) կետեր	Հողամասի Y	Հողամասի X	Ծնգիծ/ գծային
1	8468419.087	4459309.521	3.93
2	8468415.264	4459310.45	0.44
3	8468415.358	4459310.877	3.93
4	8468419.199	4459310.03	0.52
1	8468419.087	4459309.521	

Մասշտաբ 1:200		
Որակավորում ունեցող անձ		
Որակավորման վկայականի համարը		
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		
ՀՎՀՀ		
Ստորագրություն		
ամիս ամսաթիվ	չափագրության	13.05.2024
	հատակագծի կազմման	15.05.2024

Ս.Պ.Ը. «ԳԵՈԼԵՆԴ» ООО «ГЕОЛЕНД» «GEOLAND» 03023406
Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2024 թվականի N 2678

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N 801 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 09-ի N 1036-Ն և 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշումների, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի 2024 թվականի մարտի 26-ի N Կ-26032024-07-0047 որոշումը, հաշվի առնելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 16-ի N Ք-3565).

1. Աբովյան համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 19-ի «Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Կարմիր բանակի փողոցի թիվ 6 շենքի հարևանությամբ գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նշանակության ավտոտնակը համայնքի սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին» N 801 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) որոշման վերնագրում «ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ» բառից հետո լրացնել «, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ» բառերով.

2) որոշման 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամաս և տրամադրել հասցե՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Կարմիր բանակի փողոց, թիվ 10/1»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. հունիսի 06
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2024 թվականի N 2677

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, հիմք ընդունելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության դիմումը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 23-ի N S-1030).

1. Հաստատել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքում գտնվող 07-002-0116-0005, 0347 կադաստրային ծածկագրերից 25.35 քառակուսի մետր մակերեսով հողամասի հատակագիծը (կցվում է):
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, ՈՒսանողական թաղամաս, 32:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. հունիսի 06
ք. Աբովյան

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Սեփականատեր	
Արզականի համայնք	

Կոտայք Արզական

Մարզ, համայնք, հասցե

Հողօգտագործման հիմքը

Հաստատում եմ ... 2024թ.

Համայնքի ղեկավար Կ.Տ.

անուն, ազգանուն, հայրանուն



Մակերես հա	0.02535
Ծածկագիր	07-002-0116-0005-hg,0347-hg
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի
Գործառնական նշանակություն	Ներբնակավայրային Այլ հողեր

Լրացուցիչ նշումներ.

Հողամասի			
Եզրագծային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)

Մասշտաբ 1:1000		
Որակավորում ունեցող անձ		Էդիկ Վիրաբյան
Որակավորման վկայականի համարը		220
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		<<ԿՈԼՍՈՐԻԱ ՌԻԵԼԹԻ>>ՍՊԸ
ՀՎՀՀ		02261082
Ստորագրություն		
ամիս ամսաթիվ	չափագրության	10.10.2023թ
	հատակագծի կազմման	22.12.2023թ

Հողամասի			
Շրջադարձային (բեկման) կետեր	Y	X	Գծային չափերը
1	8469424.635	4460069.751	40
2	8469389.495	4460088.862	6
3	8469392.36	4460094.129	40
4	8469427.499	4460075.018	26.49
5	8469440.323	4460098.202	28.07
6	8469416.102	4460112.38	0.67
7	8469416.355	4460112.997	8.14
8	8469409.202	4460116.887	0.85
9	8469409.87	4460117.41	3.95
10	8469413.711	4460116.489	3.84
11	8469416.919	4460114.37	0.05
12	8469416.963	4460114.34	2.09
13	8469416.171	4460112.405	28.02
14	8469440.325	4460098.202	32.49
15	8469424.673	4460069.731	0.04
1	8469424.635	4460069.751	

Հողամասի՝ Այլ հողեր 0.02517 հա

հողամաս 1- 0.02402 հա			
Շրջադարձային (բեկման) կետեր	Y	X	Գծային չափերը
1	8469424.673	4460069.731	40.04
2	8469389.495	4460088.862	6
3	8469392.36	4460094.129	40
4	8469427.499	4460075.018	0.07
5	8469427.561	4460074.984	5.99
1	8469424.673	4460069.731	

հողամաս 2- 0.00115 հա			
Շրջադարձային (բեկման) կետեր	Y	X	Գծային չափերը
1	8469409.202	4460116.887	0.85
2	8469409.87	4460117.41	3.95
3	8469413.711	4460116.489	3.9
4	8469416.963	4460114.341	1.48
5	8469416.403	4460112.971	0.05
6	8469416.355	4460112.997	1.32
7	8469415.194	4460113.628	2.21
8	8469413.254	4460114.683	4.35
9	8469409.429	4460116.764	0.26
1	8469409.202	4460116.887	

Որակավորում ունեցող անձ		Էրիկ Վիրաբյան
Որակավորման վկայականի համարը		0229
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		«Վոլտ Սերվիս Ռիելթոր» ՍՊԸ
ՀՎՀՀ		02264082
Ստորագրություն		
ամիս ամսաթիվ	չափագրության	10.10.2023թ
	հատակագծի կազմման	22.12.2023թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2024 թվականի N 2676

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՐԱԼԱՆՋԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 26 ՇԵՆՔԻ ԵՏՆԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն, N 912-Ն և 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն որոշումների, հաշվի առնելով Վարդան Հովսեփյանի լիազորած անձ Վահրամ Ամիրխանյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի ապրիլի 25-ի N Ք-3027).

1. Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Սարալանջի փողոցի թիվ 26 շենքի ետնամասում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 23.5 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 23.5 քառակուսի մետր արտաքին և 21.4 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը համարել Աբովյան համայնքի սեփականություն և ճանաչել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023EFQQQF):

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը (կցվում է):

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Սարալանջի փողոց, թիվ 5/154:

5. Սույն որոշումն՝ ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում, տրամադրել անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը:

6. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած Վարդան Հովսեփյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. հունիսի 06
ք. Աբովյան

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Սեփականատեր՝ ք.Աբովյան համայնքապետարան

Պատվիրատու՝ Վարդան Հովսեփյան

Կոտայք, ք.Աբովյան, Սարալանջի 26 շենքի ետնամասում թիվ 154ավտոտնակ

Մարզ, համայնք, հասցե

Հողահատկացման հիմքը

Հաստատում եմ 06.06.2024թ.

Համայնքի ղեկավար Կ.Տ.

անուն, ազգանուն, հայրանուն



Մակերես հա	0.00235հա
Ծածկագիր	
Նպատակային նշանակություն	բնակավայրերի
Գործառնական նշանակություն	բնակելի կառուցապատման

Լրացուցիչ նշումներ.

Հողամասի

Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ X	Կոորդինատներ Y	Գծային չափերը (մ)
1	4459243.94	8469430.05	
			3.40
2	4459247.10	8469431.29	
			6.90
3	4459244.57	8469437.71	
			3.40
4	4459241.41	8469436.47	
			6.90
1	4459243.94	8469430.05	

Մասշտաբ 1:1000

Որակավորում ունեցող անձ	Ա. Խաչատրյան
Որակավորման վկայականի համարը	0193
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	«Ունաո Գրուպ» ՍՊԸ
ՀՎՀՀ	08249754
Ստորագրություն	

ամիս ամսաթիվ	չափագրության	22.12.2023
	հատակագծի կազմման	26.12.2023

Կ.Տ.

Հողամաս			
Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	

1.Ա/S			
Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	4459243.94	8469430.05	3.40
2	4459247.10	8469431.29	6.90
3	4459244.57	8469437.71	3.40
4	4459241.41	8469436.47	6.90
1	4459243.94	8469430.05	

Որակավորում ունեցող անձ		Ա. Խաչատրյան
Որակավորման վկայականի համարը		0193
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		«Ունաա Գրուպ» ՍՊԸ
ՀՎՀՀ		08249754
Ստորագրություն		
ամիս ամսաթիվ	չափագրության	22.12.2023
	հատակագծի կազմման	26.12.2023

Կ.Տ.

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայք,ք.Աբովյան Սարալանջի 26 շենքի ետնամասում թիվ 154 ավտոտնակ

Մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր	Վարդան Հովսեփյան



Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100		
Որակավորում ունեցող անձ		Ա. Խաչատրյան
Որակավորման վկայականի համարը		0193
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		«Ուժառ Գրուպ» ՍՊԸ
ՀՎՀՀ		08249754
Ստորագրություն		
ամիս ամսաթիվ	չափագրության	22.12.2023
	հատակագծի կազմման	26.12.2023

Կ.Տ.

Շինությունների բնութագիր

ՀՀ	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Հարկ	Հարկայնությունը	Մակերեսները (քմ)		Բարձրությունը (մ)	Ծավալը (խմ)	Կառուցման տարեթվերը	Տանիքի նյութը				Ավարտվածության աստիճանը				Պատերի շինանյութերի տեսակները	Միջհարկային ծածկի		Արտաքին հարդարումը ըստ կողմերի				
					Օրինական	Ինքնակամ				թիթեղ	շիֆեր	կղմինդր	այլ նյութ	ավարտուն	մինչև 50%	50-80%	80% և ավելի		փայտ	երկաթբետոն	շարվածք	երեսապատված	ծեփված	սվաղված	կապիտալ նորոգում պահանջող
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
1	բնակելի	ա/տ	1	1		21,4	2,2	47,10	1996				v					v		v					4

Շինությունների ընդհանուր մակերեսը (քմ)	Այդ թվում Օրինական կառուցված	Այդ թվում Ինքնակամ կառուցված
27	28	29
21,40		21,40

Շինությունների տարեթվերը գրված են սեփականատիրոջ հայտարարությամբ

կատարող (Ստորագրություն) Ա. Խաչատրյան (Անուն, ազգանուն) 26,12,2023 (Ամիս, ամսաթիվ)

Որակավորման վկայականի 0193 (Համարը) 29,05,2012թ. (Տրման ամիս, ամսաթիվ)

<Ումառ Գրուպ> ՍՊԸ տնօրեն Լ.Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հունիսի 2024 թվականի N 2675

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ԾԱՂԿՈՒՆՔԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը և ավտոտնակը կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Լևոն Հովհաննիսյանի լիազորած անձ Գրիգոր Ծապովյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 27-ի N Ք-3822).

1. Լևոն Բաբկենի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2024 թվականի մարտի 4-ի N 22052024-07-0201 վկայական) Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի Ծաղկունքի 2-րդ փողոցի թիվ 6 հասցեում գտնվող 1076.7 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 163,1 քառակուսի մետր արտաքին, 134.7 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը և 13.7 քառակուսի մետր արտաքին, 11.5 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը համարել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023YAWTSR):

2. Լևոն Հովհաննիսյանը պարտավոր է ինքնակամ կառուցված բնակելի տան և ավտոտնակի օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Աբովյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին մուծել 396 778 (երեք հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր յոթանասունութ) դրամ, հակառակ դեպքում՝ սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. հունիսի 06
ք. Աբովյան

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Սեփականատեր	Մարզ Կոտայք, համայնք Աբովյան, գ. Բալահովիտ , Ծաղկունք 2-րդ փողոց թիվ 6 բնակելի տուն	Հաստատում եմ 06.06.2024թ.
Լևոն Հովհաննիսյան Բաբկենի	Մարզ, համայնք, հասցե	Համայնքի ղեկավար Կ.Տ.
	Հողահատկացման հիմքը	անուն, ազգանուն, հայրանուն

Շև 1



Մակերես հա	0.10767
Ծածկագիր	07-018-0040-0004
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի
Գործառնական նշանակություն	Բնակելի կառուցապատման

Լրացուցիչ նշումներ.

Հողամասի

Շրջադարձային (բնութագրական) կետեր	Կոորդինատներ X	Կոորդինատներ Y	Գծային չափերը (մ)
1	4457635.20	8465873.64	
2	4457648.87	8465862.62	17.57
3	4457676.74	8465838.10	37.11
4	4457690.44	8465852.56	19.92
5	4457655.42	8465882.39	46.00
6	4457651.49	8465885.74	5.17
7	4457648.31	8465888.42	4.15
1	4457635.20	8465873.64	19.76

Մասշտաբ 1:500

Որակավորում ունեցող անձ		Սուրեն Դավթյան
Որակավորման վկայականի համարը		0411
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		ՀՁ Սուրեն Դավթի Հովակիմյան
ՀՎՀՀ		47921379
Ստորագրություն		
ամիս ամսաթիվ	չափագրության	25.11.2023
	հատակագծի կազմման	05.12.2023

Կ.Տ.

1. Բնակելի տուն			
Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	4457641.51	8465872.53	
2	4457645.02	8465869.72	4.50
3	4457643.43	8465867.73	2.55
4	4457648.58	8465863.60	6.60
5	4457658.93	8465876.51	16.55
6	4457657.25	8465877.86	2.15
7	4457656.91	8465877.43	0.55
8	4457654.02	8465879.74	3.70
9	4457653.21	8465878.73	1.30
10	4457656.09	8465876.41	3.70
11	4457655.97	8465876.26	0.20
12	4457648.98	8465881.86	8.95
1	4457641.51	8465872.53	11.95

2. Չուգարան			
Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	4457638.63	8465870.88	
2	4457639.64	8465870.06	1.30
3	4457640.20	8465870.76	0.90
4	4457639.19	8465871.58	1.30
6	4457638.63	8465870.88	0.90

3. Ավտոտնակ			
Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	4457635.43	8465873.45	
2	4457638.63	8465870.88	4.10
3	4457639.19	8465871.58	0.90
4	4457640.59	8465870.45	1.80
5	4457641.22	8465871.23	1.00
6	4457639.82	8465872.36	1.80
7	4457642.64	8465875.86	4.50
8	4457639.45	8465878.43	4.10
1	4457635.43	8465873.45	6.40

Որակավորում ունեցող անձ		Սուրեն Հովսեփյան
Որակավորման վկայականի համարը		0411
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		ԱՁ Սուրեն Հայկի Հովսեփյան
ՀՎՀՀ		47921379
Ստորագրություն		
ամիս ամսաթիվ	չափագրության	25.11.2023
	հատակագծի կազմման	05.12.2023

Լ.Տ.

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Չև 3

Մարզ Կոտայք, համայնք Աբովյան, գ. Բալահովիտ , Ծաղկունք 2-րդ փողոց թիվ 6 բնակելի տուն

Մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր	Լևոն Հովհաննիսյան Բաբկենի

1. II հարկ
D = 0.40
d = 0.10
h = 2.80



1. I հարկ
D = 0.40
d = 0.10
h = 2.80



Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ	Սուրեն Հովակիմյան
Որակավորման վկայականի համարը	0411
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	ՀՁ Սուրեն Հայկի Հովակիմյան
ՀԾՀՀ	47921379
Ստորագրություն	
ամիս ամսաթիվ — չափագրության	25.11.2023
ամիս ամսաթիվ — հատակագծի կազմման	05.12.2023

Կ.Տ

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Չև 3

Մարզ Կոտայք, համայնք Աբովյան, գ. Բալահովիտ , Ծաղկունք 2-րդ փողոց թիվ 6 բնակելի տուն

Մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր	Լևոն Հովհաննիսյան Բաբկենի

3. I հարկ
D = 0.20 - 0.25
h = 1.95





3. Նկուղ
D = 0.20 - 0.32
h = 1.90

Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ	Սուրեն Հովակիմյան
Որակավորման վկայականի համարը	0411
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	ՍՊ Սուրեն Հայկի Հովակիմյան
ՀՎՀՀ	47921379
Ստորագրություն	
ամիս ամսաթիվ — չափագրության	25.11.2023
ամիս ամսաթիվ — հատակագծի կազմման	05.12.2023

ՀՏ

Հավելված 1.5

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Մարզ Կոտայք, համայնք Աբովյան գյուղ Բալահովիտ Ծաղկունք 2-րդ փողոց 6

Մարզ, համայնք, հասցե

Հ/Հ	Տարածքային ներքին համայնքի անվանումը	Շինության նշանակությունը	Կառուցման տարեթիվը	Հարկայնությունը	Մակերես (քմ)		Բարձրությունը (մ)	Ծավալը (խմ)	Հիմնական գործառույթ	Տանիքի նյութ (քմ)				Ավարտվածության աստիճան (քմ)				Շինությունների կառուցման նյութի կամ կառուցվածքի տեսակը									Միջհարկային ծածկի նյութ		Արտաքին հարդարումն ըստ կողմերի				
					ընդհանուրը	ընդհանրից բնակելի				կերամիկական	ցեմենտ-ավազային/մետաղական թիթեղյա	մետաղական	փափուկ տանիքի նյութ	մինչև 50%	50%-80%	80%-ից ավելի		քարից, բետոնից և երկաթբետոնից	խոշոր չափսի կավե բլոկներից	աղյուսից	փայտից	նշված չէ	Հիմնական կրող մասի այլ				ելնող մասի անցք	ընդհանուրը	Շարասվածը	ջարիսատեսքը	ջրաքարը	գաղութային ցեմենտը	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34
1	Բնակելի	Խորդանոց	1	2		3.00	2.80	8.40	2011								V				V							V					4
1	Բնակելի	Բնակելի տուն	2	2		123.60	2.80	346.08	2011	V							V				V							V					4
1	Բնակելի	Բնակելի տուն բ/պ կամ ա/հ	2	2		3.30			2011																								
1	Բնակելի	Բնակելի տուն բ/պ կամ ա/հ	2	2		4.80			2011																								
3	Բնակելի	Ավտոտնակ	1	1	11.90		1.95	23.21	ըստ կադ. գործի				V				V				V							V					4
3	Բնակելի	Ավտոտնակ	1	1		9.70	1.95	18.92	2011				V				V				V							V					4
3	Բնակելի	Նկուղ	նկուղ	1	20.70		1.90	39.33	ըստ կադ. գործի								V					V						V					4
3	Բնակելի	Նկուղ բ/պ կամ ա/հ	նկուղ	1		1.80			2011																								
4	Բնակելի	պարիսպ			3.00		2.30	6.90	ըստ կադ. գործի												V												

Շինությունների ընդհանուր մակերեսը (քմ)	Այդ թվում	
	Օրինական կառուցված (քմ)	Ինքնակամ կառուցված (քմ)
35	**36**	**37**
181.8	35.6	146.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2024 թվականի N 2674

ԱՐՄԱՆ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Արման Դավթյանի հայտը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 29-ի N Ք-3850).

1. Արման Դավթյանին տալ ավտոտնակի վերակառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է):
2. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արման Դավթյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. հունիսի 06
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 412 «06» հունիսի 2024թ.

Օբյեկտ *ավտոտեղակի վերակառուցում*
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերաոճավորում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն.

Նախագծային փաստաթղթերի մշակման համար *«Աշխատանքային նախագիծ» (միջին ռիսկայնության, II կատեգորիա)*
Ուսակիրճ բնութագրումը. հզորությունը, ծրագրային տատիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը *22, Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, ք. Աբովյան 1-ին մ/շ 8/450 , ծածկագիր՝07-002-0086-0495*
(մարզի. համայնքի, փողոցի անվանումները շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող *Արման Դավթյան (22, ք.Աբովյան Երիտասարդական 1շ. 58բն, հեռ. +37491315454)*
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը. բնակության վայրը. հեռախոսահամարը, էլեկտրոնային հասց.են)

Առաջադրանքի տրամադրման հիմքը *Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման վկայականը, Էսքիզային նախագիծը*
(կառուցապատման նպատակով 22 օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, սեփականի գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)

Առաջադրանքի գործողության ժամկետը *Մեկ տարի*
(22 կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31 րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1.Հողամասը գտնվում է *նպատակային նշանակությամբ՝ բնակավայրերի, գործառնական նշանակությամբ՝ բնակելի կառուցապատման*
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում. դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2.(*) Հողամասի չափերը *0,006656 հա*
(հողամասի սահմանները՝ կտրորինատային նշանարաձայր. մակերեսը. (հա)

3. Հողամասի առկա վիճակը *Հողամասը ծանրաբեռնված է*
(տնկիները բնութագրերը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը. բարելավվածքը և այլ)

4.(*) Տրանսպորտային պայմանները *ներհամայնքային նշանակության ճանապարհ*
(ճանապարհների առկայությունը, երկաթգիայինի տրանսպորտի մոտեցումները և այլն)

5.(*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ
(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման. էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)
Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցտիներ:

6.(*) Կից հողամասեր
(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները. այդ թվում՝ ստորգետնյա և
Հարևանությամբ գտնվող բնակելի տներ, հողամասեր և տարածքներ
վերգետնյա անցումները և դրանց սահմանները համաձայն ներկայացված սխեմայի)

7.Քաղաքացիների պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) *Առկա չեն*
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8.(*) Հատակագծային սահմանափակումներ *Հաշվի առնել կից տարածքներում առկա և նախատեսվող կառուցապատումը*
(անդրանցում գտնվող պահպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները. այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9.Ճարտարապետահատակագծային պահանջներ *մշակել նախագիծ՝ համայնք Աբովյան, ք. Աբովյան 1-ին մ/շ 8/450 հասցեում գտնվող հողամասում՝ ավտոտնակի վերակառուցում՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով տրված հողամասի սահմաններում:*
(Ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից. առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից. առաջարկություններ ճանապարհների ձևավորման, տանիքների, արտաքին տների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) *ըստ նորմերի*

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) *ըստ նորմերի*

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) *մինչև 9,0 մ*
(առանձնահատկությունները գլխարդանքների շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ 20.04.Երկրաշարժադիմացկուն շինարարություն Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ. սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն))

9.4. կառուցապատման խտության գործակիցը *ըստ նորմերի*
(կառուցապատվող հողատարածքի) բնակելիության մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը *ըստ նորմերի*
(կառուցապատվող հողատարածքի) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%)

9.6. կանաչապատման տոկոսը *ըստ նորմերի*
(կառուցապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%)

9.7. այլ պահանջ-ներ

- *Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները*
- *Համաձայն Աբովյան համայնքի ավագանու 06.12.2022թ. N 174-Ա որոշման՝ շինությունների արտաքին պատերի համար նախատեսել սպիտակ, մոխրագույն, ծիրանագույն երանգները, կապտականաչ հայելային ապակիները, իսկ տանիքների համար՝ շագանակագույն և մուգ կապտականաչ երանգները*

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների ներքնականությունը	*Առկա չէ*
11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները	*Համաձայն նորմերի*
12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	*Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ*
12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում	*Համաձայն նորմերի* (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2. (*) էլեկտրամատակարարում	*Համաձայն նորմերի* (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3 . (*) գազամատակարարում	*Համաձայն նորմերի* (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ ղիտահորը) տեղադիրքը	*Համաձայն նորմերի* (համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլեկտրային տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	*Առկա չեն*
12.6. աղբահանություն	*համայնքային*
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	*Կազմակերպել տարածքի ջրահեռացում:* (ուղիների կազմակերպում, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	*Ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել* (լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ծաղկաթաղեցեական փաթը ձևեր, գանկապատում, գազոպղ և այլն)
15. Շինարարական նյութեր	*Երկաթբետոնե տարրեր, քարե շար, ապակի, մետաղական տարրեր:* (շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ	*Ըստ նախագծի* (արտակարգ իրավիճակներում մարդկանց օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներ	*Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները* (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	-
19. Շրջակա միջավայրի պահպանում	*ապահովել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան միջոցառումները* (շրջակա միջավայրը վատնգավող ազդեցություններից բացառելու միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում	*Ըստ նորմերի* (առաջարկություններ շինարարության հետ կապված անհրաժեշտության ազդեցության բացառման, բաղաքային տնտեսության և այլանպատակի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	*մեկ տարի, ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ. հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին և այլ իրավական ակտերին համապատասխան:* (Նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	*համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման* (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության ենթակա կամ նախագծողի նկատմամբ պահանջվող)
23. Միջանկյալ համաձայնեցում	*չի պահանջվում* (իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)
24. Հասարակական քննարկումներ	*Նորմերի համաձայն* (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)
25. Համաձայնեցումներ	• *Մինչև նախագծային աշխատանքները սկսելը համաձայնություն ձեռք բերել տվյալ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի (օգտագործողների) հետ* • *Համաձայնեցում հարևան հողամասի սեփականատեր(երի) (օգտագործող(ների)) հետ*
	(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)
26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում	*չի պահանջվում*
27. Այլ պայմաններ	• *Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության աոընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:* • *Շինությունը նախագծել 22.05.2023թ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանով հաստատված դրույթներին համապատասխան:* • *Նախագիծը ներկայացնել համաձայնեցման երկու օրինակից:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2024 թվականի N 2673

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2007 թվականի օգոստոսի 09-ի N 1036-Ն որոշման, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, հիմք ընդունելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 27-ի N Ք-3810).

1. Փոփոխել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող 07-002-0116-կադաստրային ծածկագրով հողամասից 381.0 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր հողամասի գործառնական նշանակությունը որպես ընդհանուր օգտագործման հողամաս և տրամադրել հասցե՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Նաիրյան փողոց, 3/1 հողամաս:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագիծը (կցվում է):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. հունիսի 06
ք. Աբովյան

Սեփականատեր	ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ	Ձև 1
Աբովյան համայնք	Կոտայքի մար, Աբովյան համայնք, ք. Աբովյան մարզ,համայնք,հասցե	Հաստատում եմ 09.06.2024թ. Համայնքի ղեկավար Կ.Տ.
	ՀՀ կառավարության 26.05.2006թ. N 1022-Ն որոշում հողահատկացման հիմքը	անուն,ազգանուն,հայրանուն



Մակերես հա	0.0381
Ծածկագիր	07-002-0116-
Նպատակային նշանակություն	բնակավայրերի
Գործառական նշանակություն	այլ հողեր

Լրացուցիչ նշումներ.

ՀՈՂԱՄԱՍ

Շրջադարձային կետեր	Կոորդինատներ Y	X	Ծավալ մակերես (մ)
1	8469047.0508	4459600.3844	
			10.09
2	8469044.0557	4459610.0161	
			23.37
3	8469067.2883	4459612.5777	
			10.00
4	8469066.4839	4459622.5453	
			8.00
5	8469074.4358	4459623.4221	
			6.72
6	8469074.9764	4459616.7223	
			13.28
7	8469076.0445	4459603.4869	
			29.16
1	8469047.0508	4459600.3844	

Մասշտաբ 1:500

Որակավորում ունեցող անձ		Մանվել Դավթյան
Որակավորման վկայականի համարը		046
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		ԳԻՍ-ԱՐՏ ՍՊԸ
ՀՎՀՀ		03532649
Ստորագրություն		
ամիս ամսաթիվ	չափագրության	20.05.2024
	հատակագծի կազմման	24.05.2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2024 թվականի N 2672

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ 15/1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ, 55-րդ և 62-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով Անիչկա Պետրոսյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 29-ի N Ք-3874).

1. Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 15/1 շենքի թիվ 38 հասցեում գտնվող անշարժ գույքը (հիմք՝ 2024 թվականի մայիսի 29-ի հողամասի առուվաճառքի պայմանագիր՝ գրանցված Հայաստանի Հանրապետության «Կոտայքի մարզ» նոտարական տարածքի նոտարի գրանցամատյանում N 2718) վերահասցեավորել՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Հանրապետության պողոտա, 15/4:
2. Անիչկա Պետրոսյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անիչկա Պետրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2024թ. հունիսի 06
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հունիսի 2024 թվականի N 2671

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 30-Ա որոշման, հիմք ընդունելով Աբովյան համայնքում սահմանված տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 03-ի ուսումնասիրության ակտը և Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2024 թվականի հունիսի 04-ի N Ք-4013).

1. 2024 թվականի համար Աբովյան համայնքում սահմանված տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառել վճարի 50 տոկոսի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման պահից և տարածվում է 2024 թվականի մայիսի 01-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. հունիսի 06
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ղեկավարի 2024 թվականի
հունիսի 06-ի N 2671 որոշման

ՑԱՆԿ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱՉԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ

Հ/Հ	ԵՐԵԽԱՅԻ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ԾՆՆԴՅԱՆ ՕՐ, ԱՄԻՍ, ՏԱՐԵԹԻՎ
1	2	3
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 9 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈՒԱԿ		
1	Դավիթ Աբրամյան 50 %	28.12.2020թ.
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 12 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈՒԱԿ		
2	Արիանա Ստեփանյան Պավելի 50 %	22.11.2019թ.
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈՒԱԿ		
3	Էդիկ Հովհաննիսյան Գարիկի 50 %	15.04.2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2024 թվականի N 2670

«ԿԱՐԵՆ ԴԱՎԻԹՅԱՆ ԷԴՈՒՐԱԴ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 113-Ն, 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն և դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշումների, հաշվի առնելով «Կարեն Դավիթյան Էդուրադ» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2024 թվականի հունիսի 03-ի N Ք-3960).

1. Թույլատրել «Կարեն Դավիթյան Էդուրադ» անհատ ձեռնարկատիրոջը 2024 թվականի հունիսի 01-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Արզնու խճուղի թիվ 1/18/4/1 հասցեում տեղադրել արտաքին գովազդ (Թույլտվություն N 49 կցվում է):
2. Հաստատել արտաքին գովազդի էսքիզը՝ համաձայն հավելվածի:
3. «Կարեն Դավիթյան Էդուրադ» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201611 հաշվեհամարին վճարել 20 560 (քսան հազար հինգ հարյուր վաթսուն) դրամ տեղական տուրք՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Կարեն Դավիթյան Էդուրադ» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. հունիսի 06
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԱԳ - 49

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

Տրված՝ ***06 հունիսի 2024թ.***

Թույլատրված գործունեության անվանումը՝
Այլ արտաքին գովազդի տեղադրում:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
«Կարեն Դավիթյան Էդուարդի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ Արմավիրի մարզ Վաղարշապատ Շիրվանզադեի փ. փ. 13Ա, ՀՎՀՀ՝ 49839995:

Գովազդի տեղադրման վայրը/վայրերը և չափերը (քմ)՝ ***ՀՀ Կոտայքի մարզ Աբովյան համայնք Աբովյան քաղաք Արզնու խճուղի թիվ 1/18/4/1, 1.958քմ:***

Թույլտվության գործողության ժամկետը՝ ***01 հունիսի 2024թ.***-ից մինչև ***31 դեկտեմբերի 2024թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

Հավելված
Աբովյան համայնքի ղեկավարի
2024 թվականի հունիսի 06-ի N 2670 որոշման

ԳՈՎԱԶԴԻ ԷՍՔԻԶ



0.55 x 0.44 x 4 = 0.968քմ
1.1 x 0.9 = 0.99քմ

Ընդհանուր մակերես՝ 1.958քմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2024 թվականի N 2669

«ԴԱՎԻԹ ԲՈԲՈԽՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ, ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԺԱՄԸ 24.00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն և դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշումների, հիմք ընդունելով «Դավիթ Բոբոխյան Ալեքսանդրի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2024 թվականի հունիսի 04-ի N Ք-4002).

1. «Դավիթ Բոբոխյան Ալեքսանդրի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2024 թվականի երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի 1-ին փողոցի թ. 4/10-1-3 հասցեում ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն (Թույլտվություն N 38 կցվում է):
2. «Դավիթ Բոբոխյան Ալեքսանդրի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105206438 հաշվեհամարին վճարել 28 125 (քսանութ հազար հարյուր քսանհինգ) դրամ՝ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Դավիթ Բոբոխյան Ալեքսանդրի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. հունիսի 06
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ, ԶՎԱՐՃԱՆՔԻ, ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ, ԽԱՂԱՏՆԵՐԻՆ ԵՎ ԲԱՂՆԻՔՆԵՐԻՆ (ՍԱՈՒՆԱՆԵՐԻՆ), ԺԱՄԸ 24.00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ

N ժ24.00-Թ-38

Տրված՝ ***06 հունիսի 2024թ.***

24.00-ից հետո աշխատելու թույլատրված գործունեության անվանումը՝
Առևտրի օբյեկտ:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
«Դավիթ Բոբոխյան Ալեքսանդրի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ ք. Երևան Ավան Չարենց թաղամաս շ. 14 բն. 18, ՀՎՀՀ՝ 25248276:

Գործունեության իրականացման վայրը՝ ***ՀՀ Կոտայքի մարզ Աբովյան համայնք Բալահովիտ գյուղ 1-ին փողոց թիվ 4/10-1-3:***

Թույլտվության գործողության ժամկետը՝ ***01 ապրիլի 2024թ.***-ից մինչև ***31 դեկտեմբերի 2024թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2024 թվականի N 2668

«ԴԱՎԻԹ ԲՈԲՈԽՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ, ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն և դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշումների, հիմք ընդունելով «Դավիթ Բոբոխյան Ալեքսանդրի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2024 թվականի հունիսի 04-ի N Ք-4003).

1. «Դավիթ Բոբոխյան Ալեքսանդրի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2024 թվականի երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի 1-ին փողոցի հ. 4/10-1-3 հասցեում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 38 կցվում է):
2. «Դավիթ Բոբոխյան Ալեքսանդրի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105206339 հաշվեհամարին վճարել 150 000 (հարյուր հիսուն հազար) դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Դավիթ Բոբոխյան Ալեքսանդրի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. հունիսի 06
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ՀՎՎ - 38

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ

Տրված՝ ***06 հունիսի 2024թ.***

Վաճառքի թույլատրված ապրանքի անվանումը՝
Հեղուկ վառելիքի վաճառք:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
«Դավիթ Բոբոխյան Ալեքսանդրի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ ք. Երևան Ավան Չարենց թաղամաս շ. 14 բն. 18, ՀՎՀՀ՝ 25248276:

Գործունեության իրականացման վայրը՝ ***ՀՀ Կոտայքի մարզ Աբովյան համայնք Բալահովիտ գյուղ 1-ին փողոց հ. 4/10-1-3:***

Թույլտվության գործողության ժամկետը՝ ***01 ապրիլի 2024թ.***-ից մինչև ***31 դեկտեմբերի 2024թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 հունիսի 2024 թվականի N 2667

«ԷԴԱԳՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշման, հաշվի առնելով «ԷԴԱԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 15-ի N S-953).

1. «ԷԴԱԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ բնակելի տների կառուցման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):
2. «ԷԴԱԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201454 հաշվեհամարին մուծել 300 000 (երեք հարյուր հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:
